ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N – 020 /ԱՔ
22.02.2012 թ

Հ Հ Արագածոտն մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252) 2-43-93, 093-98-00-05,
էլ. փոստ՝(0252) 2-44-45 , կայք՝ www. aparan.am

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ԱՆԱՀԻՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.02.2012 թ N 156-ի 5 հարցմանը.

Հարգելի Անահիտ Քոչարյան.

Հայտնվում է, որ Երևան – Վանաձոր ավտոճանապարհի Ապարան քաղաքով անցնող հատվածը միջպետական նշանակության ավտոճանապարհ է, որի սպասարկումն, այդ թվում՝ ձյան մաքրումն, իրականացվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից:

Մեր կողմից ձյան մաքրումը կատարվում է ներքաղաքային 32 կմ ճանապարհների վրա:

Աշխատանքները կատարվում է քաղաքապետարանին պատկանող DT 75 բուլդոզերի միջոցով:

Նկատի ունենալով ձյան առատ տեղումները, 2012 թ վարձակալվել և օգտագործվել է ևս մեկ տրակտոր:

Փետրվար ամսվա բոլոր օրերին 2 տրակտորներով կատարվել են ձյան մաքրման աշխատանքներ:

Ներքաղաքային ճանապարհների ձյան մաքրման աշխատանքների նպատակով կատարված ծախսերը՝ 2011 թ կատարվել է 2,1 միլիոն դրամի ծախս:

2012 թ՝ պլանավորված 2,1 միլիոն դրամի դիմաց 21.02.2012 թ դրությամբ փաստացի կատարվել է 2,0 միլիոն դրամի ծախս:

Մեր կանխատեսմամբ, փետրվարի 22-ից հետո՝ մինչև մարտ - ապրիլ ամիսներին ևս կծախսվի մոտավորապես 1,0 միլիոն դրամ, նոյեմբեր - դեկտեմբեր ամիսներին՝ 0,8 միլիոն դրամ:

Փաստորեն, 2012 թ ձյան մաքրման աշխատանքների կատարման մոտավոր ծախսը կկազմի 3, 8 միլիոն դրամ: Չհաշված, թե հնամաշ տրակտորի վերանորոգման համար դեռ որքան ծախսեր պետք է կատարվեն:

Հաշվի առնելով այս տարվա ձյան առատ տեղումները և դրա հետևանքով առաջացած խնդիրները, ներկայումս աշխատանքներ են տարվում վարկային միջոցների ներգրավման միջոցով ավելի հզոր բուլդոզերի ձեռք բերման ուղղությամբ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան